ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

Լոռու մարզպետ՝պ.-ն

՝Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Քարաբերդ համայնքի ավագանու թիվ 19-Ն որոշումը:

Առդիր 1 թերթ:

Քարաբերդ համայնքի ղեկավար՝ Յու. Շավելյան

22 դեկտեմբերի 2016թ.

գ. Քարաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » դեկտեմբերի 2016 թվականի N 19-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2012ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի և Քարաբերդ համայնքի ավագանու թիվ 11-րդ նիստի արձանագրության:

Քարաբերդ համայնքի ավագանին որոշում է:

Հավանություն տալ Քարաբերդ գյուղական համայնքի 2017-2021 թթ.-ի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրին:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ(0)

[illegible]ամիկ Շավելյան

2.Ժենյա Կոստանդյան

3.Արման Շավելյան

4.Վրույր Քոչարյան

5.Գագիկ Շավելյան

Համայնքի ղեկավար Յու. Շավելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹԹ. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2017-2021ԹԹ.

Կազմեց համայնքի ղեկավար Յու. Շավելյանը

Հաստատվել է Քարաբերդ համայնքի 2016թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 19-Ն որոշմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ----------3

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ----------4

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն ----------5

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ----------6

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը ----------8

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ----------9

2.6 Համայքի ուժեղ և թույլ կողմեր, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՄ) վերլուծություն ----------10

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում --------10

3.1 Համայնքի զարգացման տեսլական ----------10

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ----------11

4. ՀԶԾ ֆինանսավորում ----------11

5. ՀԶԾ մոնիթորինգ ----------11

ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Հնգամյա ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

1. Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում:
2. Ներհամայնքային ճանապարհների վերականգնում:
3. Գյուղապետարանի և հավաքատեղի շենք-շինության ձեռքբերում:
4. Գերեզմանատան ցանկապատի բարեկարգում:
5. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:
6. Բնակչության իրավունքների պաշտպանություն:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր աշխատակիցները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները:Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու կողմից:

2.
ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի Քարաբերդ համայնքում գյուղատնտեսությունը զարգացած չէ, վարելահողերը չմշակվելու պատճառով վեր են ածվել խոտհարքների, իսկ արոտավայրերը հեռագնա են: Գուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում համարվում է քիչ եկամտաբեր:
Նախատեսում ենք գյուղտեխնիկայի ձեռքբերում, որի առկայության դեպքում կզարգանա հողագործությունը:

Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:
Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների թեքության և հորդառատ անձրևների պատճառով դարձել են անանցանելի, առաջացնելով փոսեր և սելավատարներ:
Բարեկարգել ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները:
Կատարել համայնքի ճանապարհների փոսային նորոգումներ, խճապատում, հարթեցում: Աշխատանքները կատարել համայնքի միջոցներով:

2.1
ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քարաբերդ գյուղը գտնվում է Վանաձոր Քաղաքից հյուսիս-արևելք, մարզկենտրոնից 15կմ հեռավորության վրա:Սահմանակից է Փամբակ, Գուգարք, Բազում գյուղերին, Վանաձոր քաղաքին:Կլիման բարեխառն է, նկատվում են շոգեր,երբեմն երաշտ՝իր վնասակար հետևանքներով:Լինում են խիստ ցուրտ ձմեռներ, երբեմն ճանապարհները փակվում են:Գյուղը շրջապատված է լեռներով և անտառներով:Գյուղի վարչական տարածքը կազմում է 1720հա, որից վարելահողեր 108հա,խոտհարք՝373հա,արոտավայր՝424հա և այլն:Քարաբերդ գյուղը հիմնադրվել է 1700-ական թվականներին:Խորհրդային տարիներին կազմավորվել է կոլտնտեսություն,որի ժամանակ գյուղի վարչական տարածքի տարբեր վայրերում ունեցել ենք մեծ անասնագոմեր:Ունեցել ենք մոտ 1500 խոշոր և 3000 մանր եղջերավոր անասուններ: Կոլտնտեսությունը ունեցել է մեծ քանակությամբ խոզեր, մեղուներ, թռչուններ, որը 60-ական թթ.-ին սովխոզ կազմավորվելուց հետո մեծամասամբ վերացվեց:1952թ.-ին գյուղը ունեցել է 180 տնտեսություն,մինչև 1970-ական թվականները գյուղը ունեցել է ութամյա դպրոց, գրասենյակ,ակումբ, եկեղեցի, որոնք հիմնովին քանդվել են սովխոզի կողմից,մինչև գյուղի վերաբնակեցումը:1973թվականին գյուղը վերաբնակեցվեց քաղաք Վանաձոր:1990թվականին գյուղը նորից վերականգնվեց, որից հետո հողի սեփականաշնորհման ժամանակ նախկին գյուղացիների կողմից 180 դիմում ներկայացվեց սեփականաշնորհման գնալու:Այժմ գյուղը ունի **68** տնտեսություն, **147** բնակիչ, **որոնցից 87 տղամարդ, 61 կին:**

Այդ թվում՝

0-14 տարեկան	---2
8-14 տարեկան	---9
16-[illegible] տարեկան	---73
63 և ավելի	---63
Թոշակառուներ	---63

2.2
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմված է 5,468,0 դրամ, սեփական եկամուտները՝ 35,4%:

Աննկարագրելի ցածր է բնակչության սոցիալական վիճակը: Միակ զբաղմունքն է գյուղատնտեսությունը, անասնաբուծությունը անեկամտաբեր է: Աղքատության տոկոսը կազմում է ընդհանուր բնակչության 40%-ից ավելին: Բարձր է գործազրկությունը, որոշակի գումար համայնքի ընտանիքների բյուջեն համալրում են արտագնա աշխատանքներից: Ցածր է զբաղվածության տոկոսը: Վարձատրվող աշխատանքով ապահովված են մոտ 8 մարդ, հիմնականում տեղական ինքնակառավարման մարմիններում: Սոցիալական նպաստների համակարգում ընդգրկված են 13 ընտանիքներ, որից նպաստառու են 7 ընտանիք, մինչդեռ համակարգի անկատարության պատճառով շատերը զրկված են օգնությունից: ''Փարոս'' համակարգում ընդգրկվելու պատճառով մարդիկ հրաժարվում են հողամասերից և անասնապահությունից, որի արդյունքում ցածր է գյուղատնտեսության մակարդակը:

Աղյուսակում ներկայացնում ենք համայնքի գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները:

Գյուղ. արտադրանքի տեսակը	Ցանքի չափը	Արտադրանքի քանակը
Կարտոֆիլ	1 հա	1.2 ցենտներ
Կաղամբ	0.04 հա	5 ցենտներ
Բանջարեղեն	0.04 հա	5 ցենտներ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	220
Այդ թվում՝ կովեր	111
Մանր եղջերավոր անասուններ	251
Խոզեր	7
Թռչուններ	208
Մեղվաընտանիքներ	140

2.3
Համայնքում իրականացվող ծրագրերը

Նկարագրել՝

.Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինք տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրեր և միջոցառումներ չկան:

. Հարևան համայնքիների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ չկան:

. Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ չկան:

. Տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր չկան:

. Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրերը. Ներդրումները և միջոցառումները:

Պետության կողմից իրականացվող ծրագրեր չկան:

2.4
Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

.Համայնքի բյուջեն եկամտային մասով կազմում է 5,468,0 դրամ:

. Ծախսային մասով՝ 2000.0դրամ

Հողի հարկ	--- 363,6 դրամ
Գույքահարկ	--- 198,8 դրամ
Վարձավճարներ	--- 1475,1 դրամ
Դոտացիա	--- 3530,5 դրամ

2.5

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն են ճանապարհների անբարեկարգ վիճակը, երիտասարդության բացակայությունը, համայնքի բնակչության սոցիալական պաշտպանվածությունը:

2.6

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- համայնքում հեռախոսակապը նորմալ է և որակով
- քաղաք Վանաձորին մոտ լինելը նպաստում է բնամթերքի իրացմանը
- բարեխառն եղանակը ,առկա արոտավայրերը և խոտհարքները հիմք են անասնաբուծության զարգացման համար

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների, անմխիթար վիճակը,
- զբաղվածության ցածր մակարդակը, աշխատատեղերի պակասը
- բնակչության 40 %-ը սոցիալապես անապահով են, 5 %-ը՝ ծայրահեղ աղքատներ
- համայնքում բարձր է արտերկիր արտագաղթը
- գազաֆիկացման բացակայությունը
- գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը, որը ազդում է գյուղատնտեսության զարգացման վրա

- համայնքի ամբողջական գազաֆիկացում

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խմելու ջրի առկայություն
Բերրի հողերի ակայություն
Քարի հանքերի առկայություն

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Գյուղ մթերքների գների նվազում
Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն
Սպառման շուկաների դժվար հասանելիություն
Արտագաղթ

3.

Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1

Համայնքի զարգացման տեսլական

Բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը:

Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել:

Համայնքի սեփական եկամուտները հասցնել 20%-ով աճի:

Համայնքին ապահովել խմելու ջրով:

3.2

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի գույքը կառավարել:

Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանվածությունը:

Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ:

Խթանել գյուղատնտեսության զարգացմանը:

Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:

4.

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրերը ֆինանսավորվելու են՝

Համայնքի սեփական եկամուտներից

Այլ աղբյուրներից:

5.

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի զարգացման ծրագրի մոնիթորինգը կիրականացվի համաձայն մոնիթորինգի անձնագրով (հավելված 3) սահմանված ցուցանիշների: